մասին միջնորդությունը և դատական ծախսերի բաշխման հարցերը քննելու նպատակով դատական նիստ չի հրավիրել:
Հիմք ընդունելով վերոգրյալը և դրանք համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Դատարանը գտնում է, որ գործի վարույթը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիմքով ենթակա է կարճման:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտով լուծվում են նաև դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման և հայցի ապահովման միջոցների վերացման հարցերը:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (...) գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա (...):
«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9.2-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գնման գործընթացներին վերաբերող Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վեճերով՝ բազային տուրքի 100.000-ապատիկի չափով:
Տվյալ դեպքում, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հայցվորի կողմից նախապես վճարվել է օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը, Դատարանը գտնում է, որ քաղաքացիական գործի վարույթի կարճման պայմաններում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:
Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ, 182-րդ, 183-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ և 362-րդ հոդվածներով՝ Դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Թիվ ԵԴ2/2827/02/24 քաղաքացիական գործի վարույթն ըստ հայցի «ՏՈՉԻԿՀԻԴՐՈԷԼԵԿՏՐՈՄՈՆՏԱԺ» ԲԲ ընկերության (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ «Հայկական ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատասխանող), ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությամբ՝ «ՏՈՉԻԿՀԻԴՐՈԷԼԵԿՏՐՈՄՈՆՏԱԺ» ԲԲԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) և որպես հետևանք՝ թիվ

«ՀԱԷԿ-ԲՄԱԾՁԲ-1/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «ՏՈՉԻԿՀԻԴՐՈԷԼԵԿՏՐՈՄՈՆՏԱԺ» ԲԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին, կարճել՝ հայցվորի կողմից պահանջից հրաժարվելու հիմքով:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

4. Որոշումը կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ այն հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Արմինե Թումասյան**

---

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*